երկրներում ծնվողների մեջ իգական սեռը պակաս է ներկայացված լինում։ Մի շարք օրինակների միջին թվերը ցույց են տալիս երկու սեռի ծնվածների հավասարաթիվ լինելը։ Դա բացատրվում է առավելապես նրանով, որ այդ երկրներում կանանց մահացության տոկոսը ավելի է կանացի աշխատանքի ծանրության և կանանց կենցաղային պայմանների վատառողջության հետևանքով։ Հենց այսպիսի հակաառողջապահական պայմանների մեջ էր ապրում հայ կինը Գորիսի շրջանում, որտեղ նա շատ տեղերում դուրս չէ եկել քարայրներից կամ կիսաքարայրներից և ադրբեջանցի կինը Ղափանում, որտեղ ձմեռանոցների տիպի բնակավայրերը բավական խոշոր տեղ են բռնում իրենց անփույթ կառուցված, ցրտից վատ պաշտպանող խոնավ և նեղ հյուղակներով։ Սիսիանում կանանց թվի (թեև աննշան) գերազանցության պատճառը պետք է որոնել թե՛ ավելի առողջապահիկ բնակարանային պայմանների մեջ, մանավանդ երկրաշարժից հետո ծավալված շինարարությունից հետո, և թե՛ նրանով, որ այստեղ դրսի աշխատանքների գնացող այր մարդկանց թիվը մյուս շրջանների համեմատությամբ ավելի մեծ է։

Նախորդ գլուխներում մեր ասածից այսպիսով պարզվում է, որ Մոգիլևսկու և Երմոլով 2-րդի 1823 թ. ցուցակագրությունից հետո մինչև սովետական կարգերի հաստատումը (ինչպես դա դրսևորվում է 1939 թ. մարդահամարի տվյալներով) մի հարյուրամյակի ընթացքում Զանգեզուրի բնակչության ազգային կազմի մեջ փոփոխություն տեղի չի ունեցել։ Միայն Թուրքմենչայի դաշնագրությունից հետո գավառը հյուրընկալել է նոր բնակչություն, գլխավորապես հայկական էթնիկ տարրին պատկանող, և այնուհետև հաստատվել է կայունություն։ Հետզհետե տնտեսական և հասարակական նոր պայմանների մեջ կատարվում էին թե՛ հայ և թե՛ թուրք բնակչության ներսում որոշ ձևափոխություններ, որոնց հետևանքով, ինչպես վարը առիթ կունենանք ծանոթանալու, երկու էթնիկ տարրերի մեջ ծավալվում է արտագաղթը դրսում ապրուստի միջոցներ հայթայթելու նպատակով։ Մինչդեռ Արարատյան դաշտը ամբողջ այս վերջին դարի ընթացքում գրեթե պարբերաբար էթնիկ խոշոր լրացումներ էր ստանում և նրա այս և այն շրջաններում կատարվում էին ազգությունների մեծ տեղափոխություններ, որոնցից վերջինը՝ համաշխարհային պատերազմից հետո թուրք տարրի մի հայտնի մասի հեռանալն էր, օրինակ՝ Գառնի, Զանգի և Վեդի Բասարներից և տաճկահայերի փոխադրվելն էր Արաքսի հյուսիսային ափերը, մինչդեռ հայաբնակ դարձան ոչ միայն Շիրակը, այլև ամբողջ Ջավախքը[20] և Սամցխեթի[21] խոշոր տերիտորիան, որով բոլորովին այլափոխվեց Անդրկովկասի այս մասերի ազգային պատկերը. մինչդեռ Լոռին և մասամբ Ղազախը մանր, բայց անընդհատ ալիքներով ընդունեցին մեծ քանակությամբ ռուսական գյուղացիություն, իսկ Երևանում և Լենինականում հիմնվեցին ռուսական թաղեր, Զանգեզուրը Թուրքմենչայի դաշնագրությունը կնքելուց հետո մի կողմ մնաց նման էթնիկ տեղաշարժերից և կենցաղը ձևավորվում էր գերազանցորեն ներքին ուժերի ներգործության տակ, առանց նորամուտ էթնիկ տարրերի ազդեցության։

Թե ինչպիսի հավելումներ կամ կրճատումներ են տեղի ունեցել այդ հարյուրամյակի ընթացքում Զանգեզուրում, դժվար է թվական տվյալներով

---

[20] Ախալքալաքի գավառը։

[21] Ախալցխայի գավառը։